61. ՁՎԱԼ ԱՍՏՂ ԵՎ ՆՈՒԱՆՀԱՏ ՈՒ ՕՍԿԵԾԱՄ

Կէղնի մեկ թագավոր, էս թագավորին կէղնի իրեք տղա, մեկ աղջիկ. թագավոր ուր ջոջության վառան է. խանչեց ուր տղեկներուն, ասաց.— Տղեկներ, դո՛ր կէրթաք, գնացե՛ք, դոր չեք էրթար, Սև սար նեջիր մ'էրթաք։

Էղավ օր թագավոր մեռավ, ջոջ տղեն օծնեցին, դրեցին թախթ։ Ժամանակ մը մնաց էդ տղեն. էն մեկ օր շատ եճրզավ, խանչեց սեիսին թե՝ «Ձին խան դուս, թամք զարկ վերեն»։

Թագավոր հ'ելավ նետ ու անեղը առավ ուր հետ, գնաց նեջիր, ինչ ղոր պրտոտվավ սար, բան չկպավ ձեռ։ Ջօլոր օրը գնաց Սև սար, իշկեց օր մեկ աղվեզ պոչ տնկեր միջաց վերեն, կը պրտոտվի ուրին։ Տղեն ասաց ուրին-ուրին. «Այ հա՜յ, իմ խեր ի՛նչ... օսիաթ էրաց ձի. օր էսմըլա նեջիր կեր էստեղ, չիր թորկեր օր էստեղ գի նեջիր»։

Տղեն իշկեց էդ աղվրզու ետև, օր գնաց, մտավ ուր հ'երը։ Աղվեզ իջավ ցած, ուր փոստ էխան ուրնե. էղավ տասնուխինգ տարեկան աղջիկե պես. էկավ, կանավ տղի առեջ։

— Հա՛,— կասա տղեն,— աղջի՛, իմ նեջիր էկավ էդ տեղ, բեր։

— Թագավորի տղա՛, իջի՛ր ձիուց, մեկ ղայվա խմե. ես էլ քոն եմ, նեջիրն էլ քոն ա։

Տղեն տեսավ էն խորոտիկ աղջիկը աչքից թարանճից էրկու մատ իջավ ցածր. էրաց օր իջներ ցածր, աղջիկ էզարկ, տղի գլոխ կտրեց, վերցուց տարավ ճանտակ. ուրիշ տեղով մի թալեց, գլոխ տարավ էդիր հ'օտի ըռուֆ[1]։

---

1 Ըռուֆ—դարակ (Ծ. Բ.)։

Էրկու աղբեր իշկեցին օր ջոջ աղբեր չէկավ։ Միշնեկ աղբոր օծնեցին, դրեցին թախթ։ Միշնեկ աղբեր պըտոտվող տղա էր. օրմ՝ էրկուս մնաց, եճըզավ։ Խըլուսուն հ՝ելավ, խեծավ ուր ձին, նետ ու անեղ առավ ուր ձեռ, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, աստված դինա. գնա՞ց, Սև սարնը հ՝ելավ դուս. տեսավ խորոտ ուրը, նեշիր շատ. «Հա՛, ես հմալ խոր խաֆեն... հրմլա նեշիր կեր էստեղ, ղիս չէր թորկեր, ես գի նեշիր»։

Տղեն ընկավ աղվըզու հ՝ետև. աղվեզ գնաց, էլմ՝ մտավ ուր էրի մեջ. էլման էխան ուր աղվըզուենին, էղավ տրսնուխինգ տարեկան աղջիկ մի, էկավ, կանավ տղի առեջ։

— Այ հա՜յ. աղջի՛կ, իմ նեշիր էկավ էտա տեղ, տո՛ւր։

— Իշիր ցածբ, տղա, ես էլ քոն իմ, նեշիրն էլ քոնն ա։

Տղեն ձիուց իջավ, էրկու մատ օր ցածրցավ։ էլման տղի գլուխ կտրեց, ճանտակ տարավ, թալեց էն մեկել ճանտրկի մոտ, գլուխ լե աղբոր գլխու մոտ տարավ, էդիր։

Պստիկ աղբեր տեսավ օր աղբերներ գացին չէկան։

«Այ վա՜խ, հայ վա՜խ, ասաց, կա չկա իմ էրկու աղբրտանք իմ խոր օսիաթ կոտրեցին, գնացին Սև սար, էնդոց գլխուն բանմ՝ էկավ»։

Հ՝ելավ խըլուսուն, խըտ բարի լուսուն, էրկու ծանտր աղոցք կեցավ.— Տե՛, ասաց, քուրո՛, մացի բարի. էլ իմ աղբրտիքաց հ՝ետև նստիմ նոր թագավորութե՞ն էնիմ. քուրո՛, դու մնացիր տուն։

Կելլի կու հիշա աստված, նետ ու անեղ կութալա թև, կէրթա. ձին տողրու կու քշա, էլման կէրթա Սև սար. կիշկե աղվեզ պոչ տընկեր ա միշաց վերեն, կու պտոտի։

— Հա՛, կասա, քու տիրու խեր անիծիմ. կա-չկա, իմ աղբրրտիք դու ես սպաներ։

Ընկավ աղվըզու հ՝ետև. էսա տեղ զանիմ աղվեզը, էնա տեղ զանիմ աղվեզը, չկարցավ զարկեր. աղվեզ էրաց օր մտներ էրի մեջ, տղեն ձին քշեց էլման աղվըզու առեջ առավ. չթորկեց մտներ էրի մեջ։ Ձին քշեց էլման աղվըզու հ՝ետև. էլման էղավ, թե ինք թե ուր ձին արնե քրտինքով լվացվան։ Տղան հիշաց բանձր Մարաթուկ-Սուրբ Աստվարածին, խաչ էխան ու նետ ու անեղը էզարկ աղվըզուն, աջ կշտեն էզար, մեկել կշտեն էտուր դուս։ Գնաց աղվըզու վերեն, իշկեց օր աղվեզ չէ, մեկ ջոջ դև մ՝է։ Գնաց աղվըզու էրի դռան առեջ կանավ. իշկեց օր ջոջ խոր մի կա էդ տեղ, քաշեց աղվըզու օտնեն, թալեց խորի մեջ, ջոջ շաղչի քար մ՝էլ էդիր բերնին, իջավ, քեզի ասիմ, աղվըզու բուն։ Գնաց օդեք պտոտվավ.

տեսավ որ աղբրտոց էրկուսի գլուխ լե գրուկ է ըռուֆ, գնաց. էդ տեղ ընկավ տղեն։ Սահաթ մի ասիմ, էրկուս ասիմ, անճախ հիշարցավ։ «Իմ աղբրտրքաց հ'ետև էլ ի՞նչ տուն էրթամ», ասաց։

Էգ աղվըզուն մալ, տոլվաթ ջատ կեր, մընաց տղին. տղեն հ'ըմեն խըլուսուն կէրթեր, նեջիր կու բերեր, հ'ինք ուրին կէփեր ու կուտեր։ Քուրը իշկեց որ ամիս մը, էրկու աղբեր չկա՝ հ'ելավ, Սև սարն առավ դեմ, ծամեր փետելեն ճանբախ էտուր առեջ ու էկավ։ Աղբերն էլ նեջիրի տեղացե նոր էր էկեր, ուրին բոլ նեջիր բերեր, ղատ էփեր, նստեր, կուտա։ Իշկեց դուսց մեկ լալու մի ձեն կուգա. «Ճանըմ,— ասաց,— էս ո՞ր պիտի էղնի»։ Հ'ելավ իշկեց դուսն որ ուր քուրն ա. ընկան իրարու վղով. ուրախցան վըր իրարու։ Առավ քուրոջ, գնաց տուն. խըտ իրարու խաց կերան. մացին էդ տեղ էրկուս լե։

— Քուրո՛,— ասաց աղբեր։— դու էլ իմ օսիաթ չկոտրիս՝ իմալ որ իմ աղբրտանք իմ խոր օսիաթ կոտրեցին։

— Աղբեր ջան, իմ մեկել աղբրտանք գացին, մացիր դուն, ես իմա՞լ քու օսիաթ կոտրիմ։

— Տե՛, քուրո՛, որ իմ օսիաթ չես կոտրիր, էս տախթի աղբը որ կավիլես, դռան հ'առեջի ջաղչի քարի վերեն չլըցե՞ս։

— Շատ լավ կէղնի, աղբեր, չեմ լցեր։

Աղջիկ որմ՝, էրկու, տախթ ավիլեց, տարավ ղատն թափեց աղբ. էս մեկ օրն էլ ասաց.— Իմ աղբեր ի՛նչ դինա, տարավ աղբ էլից ջաղչի քարի մեջը։ Աղվեզ սաղցավ, հ'ելավ կանավ։ Տիլիմս էն էր, որ տան մոխիր լցին վերեն, կու սաղներ։ Աղվեզ ուր աղվըզուենին խանեց, էս դիր էղավ տըսնուխինգ տարեկան սիրուն տղե մի։ գնաց աղջիկե մոտ, աղջիկն որ տղին տեսավ, խոնճան յոթ տեղով կըտրավ.

— Տղա՛, քու գլխուն, արևուն մեռնիմ, չուր էս որ գու դո՞ր իր,— ասաց։

— Քու աղբեր զիս սպաներ էր, դրեր էր էն քարի տակ. իմ տիլիմս էն էր որ աղբ բերեցիր, լցիր վըր ձի, ես սաղցա։

— Այ տղա՛, ես քե, դու ձի։

Աղջիկն ու տղեն սիրեցին իրուր։ Աղջկա աչք ճանբախն է, որ ուր աղբեր հ'իգա, չտեսնա խավչիկ. իշկեց որ աղբեր զատենց էկավ. աղջիկ հ'իմցուց խավչկա։ Դողուն առավ աղվըզու ջան, հ'ելավ գնաց էլման մտավ ջաղչի քարի տակ։ Աղջիկե աղբերն էկավ, զատ էփեցին, կերան. քնան չուր ի լուս։ Աղբեր էլի գնաց նեջիր, աղվեզ էլման էկավ աղջիկե մոտ. ուտեն, խմեն, քեյֆ էրեցին ու-

բանց։ Մե ամիս, էրկու, իրեք հ'ընցավ մեջ տեղ, աղբեր իշկեց օր քուրոջ փոր օր զոր, օր զոր կուռի, օր պը զոր միզար կու բանձրնա։

— Քուրո՛,— ասաց տղեն,— էս տեղ մարդ չկա. էգ հ'ըմալ բան ա, կիշկիմ քու մեզար օր պը զոր կու բանձրնա, թե մարդ ունի՛ս, գազտուտ կու պահի՛ս, բե՛ր էս տեղ, աշկարա պսակիմ քու վերեն. հալալ իրիկ կնիկ էղեք, իսան օր կա՝ մեղաց որդի ա։

— Հավա՜ր, աղբե՛ր, դու էդա խոսք ինչ խոսք ա ձի ասեցիր, ես իմ խոր անվան մոտեն չե՞մ ամչնար օր դու ձի էդ խոսք կասիս, ես էդ բան էրո՞ղն իմ։

— Հ'ըպա, քուրո՛, էդ քո միզար հ'որի՞ն կը բանձրնա։

— Տախտ կավիլի, նռան խատ մի գտա, թալեցի բերանսի, էն տեղացեն փորս ուռավ։

— Տե՛, քուրո, օր տղա էղավ, անուն կու դնիմ Նռանխատ, օր աղջիկ էղավ, քու գլոխն էլ, քու աղջկեն էլ խետ կու կտրիմ։

Ինը ամիս, ինը սահաթ, ինը տաղան օր թմավ, էդոր տղե մի էղավ։ Հ'իրկուն քեռին էկավ նեջիրի տեղացեն, իրիշկեց օր քուրոջ տղե մի էղեր է. անուն էդիր Նռանխատ։

Հլղի տղեկներ օր տարին կու ջոջնեին, էդի օրե կու ջոջներ. էղավ յոթ տարեկան, օր մի էլման քեռին գացեր էր նեջիր, աղվեզ էլման էկավ տուն։

Աղջիկ ասաց.— Հերիք չէ՞ օր գաղտուտ էրթաս գաս։

— Հըպա ի՞նչ էնիմ։

— Աղբորս զա՜րկ, սպանե։

— Ես քու խաթրի խամար չեմ սպաներ,— ասաց խավչիկ,— շէխո, կէդնիմ օձ մի, կելլեմ քաշվեմ վերին դռնդիր, քու աղբեր գալուն պես կը զառնեմ, գլոխ կը ջնջխեմ, կըսպանեմ։

Նռանխատ էդ տեղ լսեց, հ'ելավ նստավ դուռ, իշկեց օր քեռին էկավ էն տեղացեն։

— Քեռի՛, քեռի՛,— ասաց,— էսօր դու ձի պիտի ջալկես, տանես տուն։

— Արի՛, գլխուդ արևուդ ղուրպան էդնիմ, Նռանխատ։

Հ'ելավ օտ մի թալեց քեռու վզի էս թևով, մեկել օտն էլ էն թևով. գլուխ լի բռնեց. քեռին առավ, գնաց ներս։

— Էս օր կէդնիմ օձ մի. ներքին ջեման տակ կու մտնիմ, օր տղեն էկավ, հ'ընցավ, զառնիմ. ձվեր կու փլխիմ, թրխ մեռնի,— ասաց։

Նռանխատ էլման քեռուն ճանբախ պախեց, իրիշկեց, քեռին էկավ։

— Քեռի, էրեկ դու ձի շալկեր ես, էս օր ես քեզի պիտի շալկեմ։ Վերուց ուր քեռին էդիր ուր վզին. խընչ քեռին շուշուտ տարավ վեր։ Քեռին խըլուսուն էլման գնաց։

Աղվեզ չը ղմըշավ օր տղին զաներ։ Աղվեզ նե՝ էլման գնաց մտավ ուր բուն։ Տղեն խըլուսուն էլման գնաց նեշիր։ Աղվեզ էլման էկավ տուն։

— Հ'որի՞ն չզարկեցիր, չըսպանեցիր իմ աղբոր,— ասաց աղշիկ։

— Քու փուճ տղեն չէթորկ,— ասաց խավչիկ։

— Կանա՞ս քանի մը խատ օձու գլոխ բերես ձի, օր ես իմ ձեռնով սպանեմ։ Աղվեզ գնաց քանի մը օձու գլոխ առավ էկավ։

Քուր բերեց ջնջխեց օձու գլոխը, խմոր շաղեց, չորս խատ քաթա թխեց։ Նռանխատ նստեր կու խաղա քաթեցներու խետ. նըշնեց էն օձոտ քաթեն։ Աղշիկ քաթեն էփեց, մեկ էտուր աղվըզուն, օր կերավ գնաց։ Հ'իրկուն աղբերն էլման էկավ, ասաց.

— Քուրո՛, էս օր շատ նեղութեն ունիմ, իսկի նեշիր չեմ էրեր։ Քուրն էլ խիվանգ գրեր էր զինք։

— Ը՞հ, ը՞հ,— կըսա ու կու տքա։

— Գլխուդ, արևուգ մեռնիմ,— կասա աղբերն,— էդ քեզի ի՞նչ էղավ։

— Իրեք խատ քաթա եմ թխեր, գլոխս կու ցավա։

— Ինչի՞ կու թխիր. էս օր էլ ցամաք հացով իտարե կէնեի։

— Աղբե՛ր, հ'ելի նստիր, ուտինք,— ինքն լե տըքտըքալեն կու նստի, քաթեք կու բերե, դնե առջևներ. օձու գլխով քաթեն կու դնե աղբոր հ'առեջ, մեկելտոնք էլ ուր ու ուր տղի հ'առեջ։

Նռանխատ ուր ձեռներ ծափ ծափ էզարկ ու ասաց.

— Նանե, քեռի, դու իշկեք, էս ի՛նչ ճնճղներ ա, հ'ընցան։

Մեր ու քեռին իշկեցին։ Նռանխատ առավ մոր հ'առջևի քաթեն, դրեց քեռու հ'առեջ, քեռու քաթեն՝ մորը հ'առեջ։ Մեր վեր իշկեց, դարձավ թեզպաթեզ ձեռ թալեց, ուր հ'առջևի քաթեն կիսեց ու կերավ։ Օր կերավ, օտներ կծկեց ու պարզեց։ Քեռին տեսավ օր քուր մեռավ, ֆքրած[1] աչքի տկով տեսած էր օր Նռանխատ քաթեն փոխեց, տարավ բերավ, մեկ սիլլե մի տղի էրեսին էտուր։

— Քեռի,— ասաց,— ես քու խարսնիսն եմ, դու իմ ախն իս։ Ես դևի տղեն եմ, դու դինաս նոնե՞ն եմ էղեր։

---

[1] Մթոք արեց, զդաց (Ծ. Բ.)։

Քուր թորկեցին էն տեղ. հ'ելան հեծան ձիանը, գնացին։ Հ'իշացին աստված, ընկան ճամբախ. շատ քիչ գնացին. աստված դինա. խասան մեկ պրակ[1], մութն էտուր վերեներ. նստան ուրանց մի ծառի տակ. քոլ ու մոլ ըերին, կրակ էրեցին ու նստան, մոմ վառեցին, ճրագ էրեցին։

— Նռանխա'տ,— ասաց քեռին,— չուր ի կես գիշեր ես կու քնիմ, կես գիշերեն խետ ես կելլեմ, դու քնի։

— Չէ', ես կու քնիմ չուրի կես գիշեր։

Քնավ չուրի կես գիշեր։ Քեռին հ'իմցուց Նռանխատին.

— Նռա'նխատ, Նռա'նխատ,— ասաց,— գլխուդ արևուդ ղուրպան էղնիմ, տե', հ'ելիր օր ես քնիմ։

Նռանխատ հ'ելավ, քեռին քնավ։ Շատ մնաց, քիչ մնաց կորեխ[2] էզարկ, ճրագ մ'երեց։ Քեռու մոտ քար չախմախ կեր. չղմըշավ օր հ'իմցուցեր, մեմէլ պիտի ասա, թե ի'նչ ղնտար վախկոտ ա օր զիս հ'իմցուց։ Բերեց, քնու ուլունքը թալեց քեռու ականջը, բանձըրցավ ծառի մի դլոխ. «Տեսնեմ, ասաց, մոտ տեղ ճրադ-մրագ կա՞, բերեմ ճրագ կպուցեմ»։ Իշկեց օր շատ զատը տեղացե՝ մեկ կրակե շավիղ կերևա։ Հ'ելավ քեռուն էդի մեկ ծառի պոդի[3] մեջ, հ'ելավ գնաց։ Գնաց-գնաց շատ քիչ՝ աստված դինա, իշկեց օր մեկ ըխտիար մը նստեր ա։

— Բարի լուս, ըխտիար բաբա։

— Աստուծո բարին վերեդ։

— Էդ ի՞նչ ա կու կծկիս, բաբա'։

— Լուսն ու մութն ա, կու կծկեմ։

— Մե քիչ հ'ուշիկ կծկա, էրթամ էս տեղ, չուրի կրակ առնիմ իդամ։

— Չէ', տղա, էն ղտար խիվանդ կա։ էն ղտար տղոցկան կա, կաղաչեն աստուծո, օր շուտ լուսնա։

Ինչ էրաց, ճար չկարցավ գտեր էտ ըխտիարի խետ. բռնեց, ձեռներ, օտներ կապեց, թալեց մեկ տեխով ու գնաց։ Գնաց իշկեց օր քառսուն խատ խավչիկ նստած ա. քառսուն կանթե պղինձ դրած ա կրակի վերեն, քառսուն եզ էլ է մորթած, լցած ա պղնձի մեջ, օսկի խնձոր առած ա ձեռ, սրով կու թալեն իրուր. էն կու թալե էնոր, կասա՝ «Զվալ Աստղի էշխին». էն կու թալե էնոր, կասա՝ «Զվալ Աստղի էշխին»։

---

1 Պուրակ (Ս. Բ.)։

2 Գիշերային ճնճուղ (Ս. Բ.)։

3 Փապար (Ս. Բ.)։

Նռանխատ վերուց, պղինձը էդիր մեկ թարաֆով, էզարկ կրակի մեջ խեցիկը, առավ դարձավ։ Դևեր օր էս տեսան, զախախորան ուրանց տեղ։

Էն մեկ դևը խանչեց.— Ի՞նչ մարդ իս դու։

— Ես աստուծո մարդն իմ,— ասաց։

— Քառսուն աղբեր իք, չենք կանի պղինձ վերցինք, դու իմա՞լ վերցիր։

— Աստուծով ես վերցի։

— Էդրանց ջոջ աղբեր ասաց.— Ձե՞ս էղնի մեղի աղբեր։

— Կէղնիմ,— ասաց,— առավ շերեփ, գնաց պղնձի վերեն։— Էս ի՞նչ ա։

— Քառսուն եալ ա, պիտի էփի, ուտենք, էրթանք Հնդկաստանա թագավորի աղջիկ՝ Զվալ Աստղին բերենք։ Ուտենք խմենք, էրթանք բերե՞նք, թե՞ չխո էրթանք բերենք՝ նոր ուտենք, խմենք։

Նռանխատ ասաց.— Էրթանք բերենք իգանք, նոր ուտենք խըմենք։

Հ՝ելան գնացին. շատ գնացին, քիչ գնացին, խասան Հնդկաստանի թագավորի պատնի տակ։

Նռանխատ սքտեք ղարկեց. հ՝ելավ պատնի գլոխ, նստավ ասաց.— Մեկ-մեկ արեք։

Դևեր մեկ-մեկ հ՝ելան վեր, մեկ-մեկ գլոխները կտրեց Նռանխատ. մեկ-մեկ թեք ականջները առավ, իջավ հայաթ։ Գնաց իշկեց օր թե Զվալ Աստղը քներ ա. էնպես նազուկ, օր ջուր խմա, պոկի տրկեն կերևա. օր չամիչ ուտե, պոկի տրկեն կերևա. էնքան նազուկ ու սիրուն ա օր արեգական կասա. «Դու մի էրևա, ես կէրևամ»։

Նռանխատ խանեց ուր մատնիք, մտուց էդոր մատ, ասաց. «Էս իմ քեռու նշանածն. առավ աղջիկե մատնիք էցգեց ուր մատ. էրաց օր գոնեն դուս պիտի հ՝ելներ, իշկեց օր մեկ օձ մի իջավ, էկավ, տյունի կյուզալին պիտի խեթե. Նռանխատ քաշեց դանակ, էզարկ օձու գլոխ, օձ փարշնվավ սյան, մնաց։

— Դանա՛կ,— ասաց Նռանխատ,— աշխար ինչ մարդ օր գա, ձեռ թալե՝ չփրցիս, ես օր հ՝իգամ՝ վրցիս։

Հ՝ելավ դուս, իջավ պատնեն ցածր. գնաց կրակի մոտ, առավ կրակ, գնաց ըխտիարին մոտ։

— Ըխտիյար բաբա, գիշերը շա՛տ հ՝ընցե՞ր ա։

— Քու տուն չավիրի, իրեք չորս գիշեր հ՝ընցեր ա մեջ տեղ։

Ըխտիյար ձեռները, օտները արձկեց, գնաց քեռու մոտ, կրակ էրաց նստավ։ Քնի ուլինքը խանեց քեռու ակնչեն, ասաց.— Քեռի՛, քեռի՛, հ՝ելի՛, փշուրմ էլ ես քնիմ։

— Օ՞ֆ, քու տուն չքանդվի, հալա նոր քներ եմ, չիք թորկիր փշուր մի քնիմ։

— Քեռի, տե՞ քնի։

Մնաց չուրի լուս քնուկ։ Խըլուսոն հ՝ելան, ուրանց ձիան խեծան, տվեցին ճանբախ, գնացին Հնդկաստանա քաղաքը իշան. իշկեցին օր թագավոր դալալ ա տվեր կանչել՝ «Օր էս աղեկութեն ո՞րն ա էրեր ձի, հ՝իգա ուր աղեկութենին աղեկութեն էնիմ»։ Քաղաքին միշի մարդիկ որն օր կէրթա, կասա՝ «Ես եմ». թագավորն էլ է, սինի մի մարգրիտ գրեր ա դիվնի օրթալխ, կասա էնոց. «Օր դուք եք, մարգրիտ խամրեցեք». Ո՛րն օր կու նստի՝ «Մեկ էրկուք իրեք...», կու խամրա։

— Չէ՛, դու չես,— կասա, ճամբախ կու դնա։ Թագավոր իշկեց օր էրկրի մեշ մարդ չմնաց, հարցուց փնտռեց. «Էլ մարդ չկա՞»։

— Էրկու մարդ նոր էկեր, իշեր ա մի պառվու տուն,— ասին։

Գնացին, էրկուսն էլ բերեցին։ Թագավոր քեռու մոտեն կու խարցուցե.

— Էս բան դո՞ւ ես էրեր։

— Չէ՛, թագավոր ապրած, ես խապար չունիմ։

Խանչեց Նռանխատ.— Այ տղա, գո՞ւ ես էրեր։

— Հա՛, թագավոր ապրած, ես էրեր եմ։— Խանեց քառսուն ակնչ խամրեց թագավորի առէջ.— Էս,— ասաց,— իմ նշան. օր էսոր չե՞ս հավատար. օձ օր իշավ Զվալ Աստղին պիտի խեթեր, իմ դանակ ղարկեր եմ օձու գլոխ. գացե՛ք, իշկեք. ինչքան օր մարդ կա, բերե՛ք, թե դանակ տեղացեն փրցուց՝ ես չիմ։

Ինչքան մարդ կեր, գացին չկարցան փրցուցին։ Նռանխատ քաշեց՝ փրցուց, ասաց.— Էսոր էլ չե՞ս հավատար. ահա՛ աղջիկե մատնիք իմ ձեռս ա։

— Այ տղա՛, դու օր էդ աղեկութեն վըր ձի էրեցիր, աղջիկ քոնն է, ուրիշ մարդու չէ։

— Թագավոր սաղ կենա. աղջիկ նշաներ եմ իմ քեռու համար՝ ձի համար չեմ ուղեր. թե ես ինչ ղնտար օր կտրիճ եմ, իմ քեռին չորս էն ղնտար կտրիճ ա քընճիս[1]։

---

1 Քան ինձ, ինձանից (Ս. Բ.)։

Նռանխատ տարավ Զվալ Աստղը պսակեց քեռու վերեն. քառասուն օր, քառասուն գիշեր խարսնիս էրաց, քեռին էդիր էտ տեղ, էրկու-իրեք տարի մնաց քեռու մոտ։

Գիշեր քնած տեղ էրազ մի տեսավ. էրգի միջին Կյաղիզեռին թաս մի շարբաթ էտուր Նռանխատին. Նռանխատն էլ էլից, էտուր Կյաղիղեռուն. էն գիշեր Կյաղիզեռին էլ ուր տեղ էնպես էրազ տեսավ։ Էսոնք օր պըզոր էշխի ընկան. էնոր էշխը էնտեղ Կյաղիզեռան, Կյաղիզեռուն էշխը էս տեղ Նռանխատ վառեց։

Քեռին տեսավ, աչկեց օր Նռանխատ ցնորվեր էր ուրին սավտից, գիշեր, ցերեկ կը մտածեր, թե ես ե՞բ էրտամ գտնիմ։

— Քեռի,— ասաց,— մնացիր բարով, ես խըլուսում կէրթամ։

— Հոգուդ արևուդ ղուրպան. ձի կու թորկես մընակ, դո՞ր կէրթաս։

— Ճար չկա, կէրթամ։— Աղեկ ձի մի քաշեց թավլից դուս, խուրճին մի օսկի վերցուց, ձին հեծավ, մնաս բարով ասաց, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, իշկեց օր աղոթրանի վախտն ա, մեկ ըըպլախ մի մտեր ա ծովը, լողվոր ա, կու սըկի ջրի տակն ու կելնի։

— Բարի լուս, էդ ի՞նչ կէնիս։

— Թագավորի խամար մուտյա[1] կու խանեմ, օր էրկու իրեք ղռոշ առնեմ, իտարա էնեմ։

— Բե՛ր փասդի, տեսնե՛նք։— Տաս լիքը օսկի կու լցեւ— Տա՛ր քու քուլֆթին։

Տարավ էկավ, աղբեր էղավ խըտ Նռանխատի։ Հ՚ելան գացին, իշկեցին աղօթրանի դախ. մարդ մի միջաց վերեն ընկեր ա։

— Բարի լուս, աղբե՛ր, ի՞նչ մարդ իս։

— Աստուծու բարին, աստղը աչկող եմ։

— Էդ վի՞ր աստղն ա կաչկիս։

— Մեր թագավորին։

— Իմ աստղը ո՞ր մեկն ա։

— Էնա պոծառ աստղն ա։

— Ձե՞ս էղնի ձի աղբեր։

— Կէղնի՛մ։

— Բեր քու փաս։— Տաս էլից, ասաց.— Տա՛ր քու տունը ու արի։ Էկավ։

Էղան իրեք հոգի, գացին, շատ-քիչ աստված դինա. տեսան մարդ մի նստեր ա իրեք ճամբախ բաժին։

— Բարև, աղբեր, դու ի՞նչ մարդ իս։

---

[1] Ծովախեցի՝ սկլականչ (Ծ. Բ.)։

— Ես ըմմտար[1] եմ, ինչ օր կուրիսի, ինչ օր էղնի, ես կիմանամ։

— Ինչ տամ քեզի, Կյազիզեռի-օսկի ծամ խանումի տեղ գըտնիս։

— Էն իմ մոտ ղոլայ ա. կուզես մկա է լե կու գտնեմ։

— Տե օր հըմալ ա, բեր քու ֆաս լե։— Էսոր լե ֆասը էլից օսկի. տարավ տուն ու էկավ. իրուր խետ բռնեցին ճանբախ, գացին։ Շատ գացին, քիչ գացին, Կյազիզեռուն քոշկին ըռաստ էկան։

Կյազիզեռին հ'ելեր էր պատնի գլոխ, կու պըտոտի։ Օսկի ծամեր էնքան հ'երկեն ա, օր կախվեր ա պատնից, իշեր գետին խանգուցվեր ա պատնի վերեն, կու պտոտեր ու Նռանխատի ճանբախ կաշկեր։ Նռանխատ տեսավ օր ուր էրազի մեջ տեսած աղջիկն ա. օր մեկ-մեկի ճամ ա տված։ Կյազիզեռին տեսավ Նռանխատ, հ'իմցավ ուր էրազի մեջ տեսածն ա. ջուշուտ իջավ պատնե. դուռ էբաց, կանավ դռան հ'առեջ, ճանչցան իրուր, զոլ պոյին էզան[2] հ'ելան վերև։ Էնտեղ օխտը օր, օխտը գիշեր խարսնիս էրեցին։

Հ'ելավ իրեք աղբոր լե ամենկուն էրկու օսկի փարա էտուր, ասաց.—Է՛, աղբրտա՛նք, աստված ձեր բան հաջողե, գացե՛ք, գախգախ իմ աստղին աչկեք, օր խավարավ, գաք զիս գտնիք. մկա կէրթաք Հնդկաստան իմ քեռու մոտ, կասեք. «Քու աչքդի լուս էգնի, Նռանխատ ուր մուրազին խասավ»։

Աղբրտանք գացին։ Տարի մը, էրկու կընցնի արանք. Կյազիզեռի մեկ օր կու շոգենա, կասա.— Նռանխա՛տ, էրթանք լողկընանք պաղ ջրով. իմ ծամեր շատ ա։ Կէրթան ջրի ափը. կու լողկընա, Կյազիզեռի ուր ծամեր կու սանտրա. սանտրի բերան մնացած մազը թալեց ծովը Նռանխատ։ Կյազիզեռին ասաց.— Հ'ո՞ւրին թալեցիր, էդոր մոտեն զարար կուգա։

— Հա՛յ տնաշեն աղջի՛կ, էղոր մոտեն ի՛նչ զարար պիտի գա։

Ծով տալղին էզար, առավ մազերը գնաց Ծոտատ թագավորի էրկիրը հ'ելավ դուռ։ Իշկեցին օր բան մի ծովի էրեսին արեգական պես կու փիլա։ Թագավորի լողվորներ էդի վերցին, առան էկան, տարան թագավորին։ Թագավոր ինչքան օսկերիչ կեր, բերեց. չըգիտցան ի՛նչ էր։ Գնացին ճատուքյար պառվի խանչեցին. էկավ. օր իշկեց, ասաց.— Է՛յ, թագավո՛ր, գլխուդ արևուդ ղուրպան էղնիմ. դու էդ մազերն ես տեսեր. հ'ըպա էս մազերու տեր տեսնիս. օր մեկ գիշեր քնիս ծոց, կէղնիս տըսնուխինգ տարեկան։

---

1 Կախարդ (Ծ. Բ.)։

2 Փաթաթվեցին միմյանց վզով (Ծ. Բ.)։

— Պառա՛վ, քեզնե կուղիմ,— ասաց Ծոտատ թագավորը,— օր ուրնցի՛ր, կշեռքի մեկ թայը քեզի կու դնիմ, էն մեկել թայը՝ օսկի կու դնիմ կշռիմ, կուտամ պարամպար։

— Էս յոթը տարի թոպա էրեր եմ, չըմ էներ ճատուքարութենն։

— Քեյֆնե, պետք է չասեր, մկա օր չբերես, գլոխդ կու կըտրիմ։

Պառավ ճար կտրավ, հ՝ելավ գնաց. ձըցում քաշեց վըր ծովուն, յոթ տարվա դինին առավ ուր խետ։

Շատ գնաց, քիչ գնաց, Կյաղիղեռու քոշկի հ՝առեշ հ՝ելավ դուս։ Ձցում տարավ, ավազի մեջ պախեց, էկավ Կյաղիղեռու դռան էզարկ՝ թը՛ղկ, թը՛ղկ։

Դուս կու դա Կյաղիղեռի, կասա,— էն ո՛րն ա։

— Ղարիպ կնիկ եմ, էկա կէրթամ սուրբ էրուսաղեմ, տա ձեր մուրատ, ընկերտիքսի դացին, ես պառավ իմ, չիմ կանա էրթար։

— Չիմ ուղեր, գնա՛ հեռըցիր։

Պառավ ի՛նչ արաց, Կյաղիղեռին դուռ չբացեց, չուր հ՝իրիկուն մնաց պառավ դռան մոտ։ Նռանխատ էն տեղացեն էկավ։

Պառավ ասաց.— Այ Նռանխա՛տ, քու գլխուն ղուրպան էղնիմ. էկա կէրթեի Սուրբ էրուսաղեմ, տա քու մուրատ. խամցա, չի կարցա էրթե քու գլխուն արևուն սատաղեն էղնի, գիշերսի ներս առնիս, չուր խլուսուն հ՝ելլիմ, էրթամ։

— Թո՛ղ էղնի, նանե՛ շան, ինչ կէղնի. միսաֆիրն օր կա՛, աստուծուն ա։— Կառնե պառավ, կու տանի ներս։

— Սըթարը օր կա, աստուծուն ա, մեղի ի՞նչ զարար պիտի էղնի. գիշերսի թող քնի. խըլուսուն կելնի կէրթա։ Քնի տեղ, խլուսուն շուտ կելնի պառավ. տախտ կավիլե, խաց զատ կէփե, չուր էնտոնք քնաց տեխեն հ՝ելան վեր, շուր էբեր, լցեց ձեռները, լվացվան։

— Կյաղիղեռի՛,— ասաց Նռանխատ,— էսոր ընկերտանք գտցած ա, էսա թող մնա էս տեղ, էղնի քեզի պեսլամա։

Պառավ ամիս մի կու մնա էդ տեխ, մեկ օր կասա.— Կյաղիղեռի, Կյաղիղեռի, ես կէրթամ, դու կու մնաս մընակ, դու Նռանխատի խոգին չիմցա՛ր, դոր էր։

— Խոգին փորուն մեջն ի, ո՞րտեղ տ՝էղնի։

— Չէ՛, Նռանխատի խոգին փորուն մեջ չէ։

Հ՝իրկուն կէղնի. Կյաղիղեռին կասա.— Նռանխա՛տ, պառավ կէրթա, ես կու մնամ մընակ, քու խոդին չասեցիր ձի օր բերեմ, ղրուցիմ, խաղամ խետ։

— Կնիկ, ի՞նչ կուզիս իմ խոգու մոտեն։

Եր շատ էրես վեր կու բերե, ասաց.— Կնի՜կ, ձեռդ բե՛ր, իմ խոգին էսա դանակն ա, օր ղարկուկ ա իմ աչ ղուլթուխ, մսի մեչ, օր քաշեցին, ես կու մեռնիմ։

Պառավ լսեց, խըլըսուն շուտ հ՚ելավ, ասաց.— Նռանխա՛տ, քու գլխուն արևուն ղուրպան, էս զտար վաղթ քու աղ ու հացը կերեր իմ, թաս մի գինի, յա թաս մի արաղ չկա՞, օր խմինք, հալալ-լամիշ էղնինք։

— Պառավ, նե՛ գինի, նե՛ արաղ ունիմ, դու օր ունիս, բե՛ր։

— Էն օր օր էկա, ավզի մեչ փարչ մի խորեցի, աչքեմ, տեսնեմ տե՞խն ա.— Գնաց բերեց մե կավ գինին, նստան, խմեցին, գինին յոթ տարվա էր, հըմալ էրեց օր Նռանխատի խելքը առավ գլխուցեն, ուշքը գնաց, ընկավ։

Պառավ ձեռ մտուց ծոց, դանակ քաշեց, թալեց ծով, Նռանխատ՝ էս օր չես մեռեր, տրսնուխինգ օր հ՚առեշ ես մեռեր։ Պառավ հ՚ելավ Կյազիզեռու ծամեր բռնեց, քանի մի խատ լե գոմբ էզար վըր գլխուն։

— Դե՛, ֆորղը[1] հ՚ելի՛ էրթանք. հերիք չէ՞,— ասաց,— ես քու ճանբախ իշկեմ։

— Պառավ, գու էղնիս, քու աստված, թո՛ղ իմ էրկան խալվըներ հագուցեմ, էրթանք։— Իրկան խալվըներ խագուց, բեղերն օլըրեց, բերեց աչքեր դեղեց. գլուխ կապեց, էրկու բարձ էզարկ իրկան միջաց դեմ, թիկնեցուց իրկան. չպուխ վառեց, էտուր ձեռ. կրակը էգիր չպխի վերեն, կեռավ, իրկան էրկու աչքեր էպադ, էրեսներն էպագ, խանեց մատնիք էցգեց իրկան, իրկան մատնիք էցգեց ուր մատ։

— Տե՛,— ասաց,— պառավ, գուն ու քո՛ւ աստված, դու գինաս։

Պառավ էդ խեզճու ծամեբեն բռնեց, քաշելեն առավ գնաց ծովու պռուկ. ձցիմին ասաց.— Ափուչիկ ու Չափուչիկ. կոտ ու կես գարի քեզիկ, ձի ու քըզի աստվածութեն ստեղծեր ա, օր հանես Ոռտատ թագավորի քաղաք։

Առավ Կյազիզեռին, գնաց Ոռտատ թագավորի մոտ։ Ոռտատ թագավոր օր տեսավ Կյազիզեռուն շատ խորոտ ա, շուշուտ խարսնիս բռնեց. ճուապ տարան Կյազիզեռուն, օր թագավոր գիշերս ի պիտի հ՚իգա կյառտաք[2]։ Կյազիզեռին ազուն առավ ուր ձեռ։

---

1 Անզգամ բոզ (Ծ. Բ.)։
2 Առագաստ (Ծ. Բ.)։

— Էս գիշեր չիմ ուզեր օր հ'իգա, օր էկավ, ազուն կու խմիմ, կու մեռնիմ, շուր ի քառասուն օր ձի օր պիտի տա, օր քառասուն օրը թմավ՝ թըխ հ'իգա։

Կյազիզեռին պաշլամիշ էրավ ջուր կրեվ ուր վերեն լցել, կասեր՝ «ես վառվա՛, ես իրիցա՛»։

Դառնանք աստղ աչքող աղբոր վերեն։ Ասաց ուրին ուրին՝ «էս ի՞նչ ղնտար պեպախտ մարդ մ'իմ էղեր, օր էս խացին ձի էխան, մեկ անգամ էնոր աստղին չեմ իշկեր»։ Խըլուսուն հ'ելավ աստղը աչքեց, օր խավարեր ա։ Հ'ելավ գնաց լողվոր աղբոր մոտ. լողվոր աղբերնը առավ գնաց քեռու մոտ, քեռուց էկան ըմմտարին մոտ։ Հ'ելան տվեցին ճանբախ, էկան գացին Կյազիզեռու քոշկ. իշկեցին օր Նռանխատ չպուխ ձեռ՝ նստած ա։ Քեռին գնաց, ձեռ էտուր։

— Նռա՛նխատ, Նռա՛նխատ,— ասաց, իշկեց օր Նռանխատ գընաց, ընկավ միջաց վերեն։

Ըմմտար աղբեր ըմմ աչկեց, հ'իմցավ օր դանակ ծովու մեշ ձըվան գլխու տակն ա։ Լողվոր ասաց.— էդ խասավ ձի, իմ վզի պարտքն ա։

Իջավ ծովը, իջավ իշկեց օր ձուկ գլոխ դրեր ա դանակի վերեն քներ ա։ Գնաց դանակ ձկան գլխու տակեն առավ, ձուկ հ'իմցավ, ընկավ էտև, շկարցավ խլսցուցեր, դանակ թալեց, էլման հ'ելավ դուս, առավ քառասուն խատ դմակ, իջավ ծովու միշին փնտրտեց, ձուկ գտավ։ Իշկեց օր դանակ ձկան բերան ա։ Դմակ թալեց ձկան բերան. ձուկ դանակ էթորկ, խասավ դմկի վերեն. լողվոր խասավ դանկի վերեն, առավ դանակըն հ'ելավ։ Ձուկ ընկավ լողվորի էտև, լողվոր էլման դմակ թալեց. հա՛ թալեց, հ'ելավ վեր, հա՛ թալեց, հ'ելավ վեր, շուրի քառասուն դմակ խըլըսավ, հ'ելավ դուս, տարավ դանակ էզարկ տեղ։

Նռանխատ հ'իշարցավ, ձեն էտուր Կյազիզեռուն.— Կյազիզեռի՛, Կյազիզեռի՛, էս իմ աղբրտանք էկած ա տուն, ղայֆա մի, չայ մի չե՞ս բերիր։

— Նռանխատ, գլխուտ արևուտ մեռնիմ, ի՞նչ Կյազիզեռի, ի՞նչ հալ, դէ՞ր ա Կյազիզեռին. մարդ մատաղ չկեր էս տեղ, դուն էլ մեռած էիր, մեք էկաք քեզի մեռած գտանք։

— Ա՜յ վա՜խ, ա՜յ վա՜խ, պառավ տարավ Կյազիզեռուն։ Կյազիզեռին կասեր, ես չի հավդի։

Էրկու օր մացին էդ տեղ։

— Նռանխատ, քելե, խրտ մեզի էրթանք։

— Ջիմ հ'իգար,— ասաց, գնաց, կանավ իրեք ճանբախ բաժինք։

— Սարա՛յ, օր կէրթամ, Կյազիզեռին գանիմ, կեսն ի վեր փլիս, ասաց։ Իշկեց օր չփլավ։ Դարձավ էն մեկել ճանրով։ Սարեն կեսնի խետ փլավ, էկավ ցածր։ Նռանխատ ընկավ էն ճանբախ, գնաց, շատ գնաց, քիչ գնաց, աստված գինա, գնաց հ'ելավ Ոռտատ թագավորի էրկիր, աղբրի վերեն նստավ, իշկեց օր էրկու կնիկ ջուր կու կրեն։ Քուրի՛կ, էդ ջուրը ինչի՞ խամար ա։— Ա՜խ, ա՛խ, կտրիչ, չեմ դինար, ի՜նչ ասեմ։

— Հելպեթ ինչի՞ էդ զտար ջուր կու կրեք։

— Կյազիզեռի կա Նռանխատի նշանած (հա՛ գտանք, ասաց ուրին ուրին Նռանխատ) ճատու պառավ գնաց. Նռանխատ սպանեց. էդ աղջիկ բերեց. մկա աղջիկ քառուն օր ուզեր է մեր թագավորից. էս օր էղավ քառուն օր ջուր կու բերենք, կու լըցնենք վերեն. էլման կասա. «Ես վառա՛, ես իրիցա՛»։

— Քուրի՛կ, կէղնի իտա ջրեն կաթ մի տաք ես առնիմ բերանս։

Նռանխատ մատնիք կու դնա բերան, կյուկյում կառնե օր ջուր խմե, մատնիք կէցկե մըջ կյուկյումին։ Ջուր կու տանին էլման կու լլեն վըր Կյազիզեռուն գլխուն, խըտ լլելուն՝ մատնիք կյուկյումի միջեն կու փրձնի, կընկնի գոգ. գոգեն կու վերցե, կաչքե մատնիքի վերեն՝ օր ուր մատնիքն ա։

— Օխե՞շ,— կասա,— իմ ճան ըռահաթավ, խովցավ։—Տե, աղջիկներ, մատնիքի տեր կուղիմ ձեզնե. շո՛ւտ բերեք։ Ձեռք մի աղջիկե խալավ կու տանին, կու խագուցեն Նռանխատին, կու բերեն Կյազիզեռուն։ Խըտ իրար կուրախանան։

Կյազիզեռին ճուապ կու ճամփա թագավորին, օր հ'իրկուն կյանուտաք դա։ Հ'իրկուն էր, Ոռտատ թագավորի աչքեր թալեցին չենկել, կապեցին գլխու վերեն, ուրախ-զուրախ առան էկան Կյազիզեռու մոտ։ Աչքեր չէր տեսներ, ձեռներ տարավ բերան, ասաց.— Կյազիզեռի՛, արի՛ պարկենք։

— Քիչ մը սապր էրե, խզմեթ ունիմ։ Նոր ձի խետ պարկիս, կէղնիս տրսնուխինգ տարեկան։

Ոռտատ թագավորի փանճաբեն էլ ծովի վերեն ա։ Նռանխատ իջավ տեղացեն, քաշեց դանակը, Ոռտատին սպանեց, ճանտակ էրաց կտոր, կտոր, թափեց ծով։ Ինք ու Կյազիզեռին պարկան, քնան, խըտ աղոթրընին հ'ելան, իշկեցին օր խզմըթճիք բարև բռնած կայնուկ ին, օր թագավոր հ'ելնի դուս։ Արև օր էրկու բաժ ել, թագավոր հ'ելավ դուս։ Իշկեցին օր, օղորթմա թագավոր էղեր ա տրս-

նուխինգ տարեկան։ Արարիչ աշխարք ուրախցան օր թագավոր խըտ էն աղչիկե պարկավ, էղավ տըսնուխինգ տարեկան։

Թագավոր գնաց նստավ թախտ։ Կանչեց ուր վազիր ու փաշաներ, ասաց.— Փառք Աստուծո, պարկած եմ էն աղչկե խետ, էղած եմ տըսնուխինգ տարեկան. չուր մկա չէի ճանչնար մարդիկ, իմ վազիր, իմ խազնատար, իմ փաշաներ, ցուց տվեք ձի՝ օր ճանչնամ։

Էս վախտին ճատու պառավ մտավ ներս, գունդ մի ծամոն դրեր էր բերան, կու ծամեր, ճըլը՛սդ-ճըլը՛սդ։

— Հա՛ թագավո՛ր, ես չասի՛, կէղնիս տըսնուխինգ տարեկան, տո՛ւր իմ օսկիք օր իմ կշեռքով պիտի տայիր։

Թագավոր ասաց.— Դացե՛ք, սանտ ու սանտքար բերեք։

Պառավի դլոխ դրին սանտի մեջ, ջնջխեցին։

Կանչեց ճալլաթճուն, զարկեց վազիրի վիզ։

Նռանխատ Կյազիզեռին խասան ուրանց սրտի մուրատին, մեք չե կու խասնիք մեր սրտի մուրատին։